ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 54 39 91, Ֆաքս 54 39 97, E-mail: info@anra.am

№ 11-8-55 22.11 2016թ.

Ձեր № 310-ի 8 21.11. 2016թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ տիկին Լիանա Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեում (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության ազատության համար պատասխանատու է նշանակված Խաչատուր Խաչիկյանը (կոմիտեի աշխատակազմի ղեկավար), ում տվյալները նշված են կոմիտեի կայքում՝ http://www.anra.am/:

Կից ներկայացվում է համապատասխան հրամանի պատճենը:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝

Աշոտ Մարտիրոսյան

Միջուկ.տեղեկատվության բաժին -564014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք.Երեւան «03» մայիսի 2016թ.

ՀՐԱՄԱՆ № 109-Ա

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվության տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման եւ պահպանման, ինչպես նաեւ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկատվության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» N1204-Ն որոշման

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ ԿԱ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակել կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Խ. Խաչիկյանին, նրան հանձնարարելով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման N 1 հավելվածի 1-6 եւ N 2 հավելվածի 7-րդ եւ 8-րդ կետերի կատարումը:

2. Կոմիտեի աշխատակազմի միջուկային տեղեկատվության եւ միջազգային համագործակցության բաժնի պետ Ա.Մելքումյանին՝ ապահովել կոմիտեի պաշտոնական կայքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման N 1 հավելվածի 6-րդ եւ N 2 հավելվածի 14-րդ կետերի պահանջներին:

3. Ուժը կորցրած ճանաչել կոմիտեի նախագահի 2014 թվականի հոկտեմբերի 10-ի N 183-Ա հրամանը:

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ